# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

## ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

16.01.2019թ.
ժամը 14:30

**Հանձնաժողովի նախագահ՝** Սարգիս Վարդանյան

**Անդամներ՝** Վարդուհի Վարդանյան
Մարիաննա Առաքելյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**<u>ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**

(Ս. Վարդանյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

2.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**<u>1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.</u>**

(Ս. Վարդանյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 10.01.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<Սամա>> ՍՊԸ-ի, <<Լեբրոն>> ՍՊԸ-ի, <<ՍՅՌՈՒՄԱ>> ՍՊԸ-ի, Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ի, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի և <<Պիրամիդա Կվինտ>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **<<Սամա>> ՍՊԸ-ն, <<Լեբրոն>> ՍՊԸ-ն,**

**<<ՅՈՌԻՄԱ>> ՍՊԸ-ն, Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ն, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ն և <<Պիրամիդա Կվինտ>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**<u>2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.</u>**

(Ս. Վարդանյան)

2.1 ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին **<<Սավա>> ՍՊԸ-ն, <<Լեբրոն>> ՍՊԸ-ն, <<ՅՈՌԻՄԱ>> ՍՊԸ-ն, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ն և <<Պիրամիդա Կվինտ>> ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

**<<Սավա>> ՍՊԸ-ի, <<Լեբրոն>> ՍՊԸ-ի, <<ՅՈՌԻՄԱ>> ՍՊԸ-ի, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի և <<Պիրամիդա Կվինտ>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 3/ համապատասխանում են սույն հրավերի պահանջներին:

**Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ն** ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել համակարգը չաշխատելու պատճառով:

2.2 Հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության հայտարարությունը, այն մասին որ համակարգը 2019 թվականի հունվարի 11-ի մինչև հունվարի 14-ի չի գործել, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին համակարգի միջոցով տեղեկացնել **Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 18.01.2019թ-ի ժամը 09:30 շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**<u>3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.</u>**

(Ս. Վարդանյան

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**<u>4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:</u>**

(Ս. Վարդանյան)

4.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝

<<**Ցիկլոիդ**>> **ՍՊԸ-ին**-2-րդ, 3-րդ, 7-րդ,17-րդ,22-րդ,26-րդ,30-րդ,35-րդ,38-րդ,40-րդ չափաբաժիններով
<<**Ֆոտոն**>> **ՍՊԸ-ին**-4-րդ,5-րդ,23-րդ,52-րդ,53-րդ,58-րդ,63-րդ չափաբաժիններով
<<**Սավա**>> **ՍՊԸ-ին**-6-րդ,9-րդ,13-րդ,34-րդ,36-րդ,37-րդ չափաբաժիններով
<<**Լեբրոն**>> **ՍՊԸ-ին**-8-րդ,11-րդ,16-րդ,27-րդ,28-րդ,31-րդ,33-րդ,47-րդ,51-րդ,60-րդ չափաբաժիններով
<<**Պիրամիդա Կվինտ**>> **ՍՊԸ-ին**-10-րդ չափաբաժնով
<<**ՅՅՈՌԻՄԱ**>> **ՍՊԸ-ին**-12-րդ,42-րդ,46-րդ,50-րդ,56-րդ չափաբաժիններով
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>**
(Ս. Վարդանյան)

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 18.01.2018թ.-ին ժամը 11:30, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Վարդանյան

Անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան